ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՀՀ, ք. Երևան, Գ. Քոչար 21 ա

13.05.2012

Մամլո հաղորդագրություն

«lragir.am» ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑԻ 12.05.2012Թ.
«ՏԻԳՐԱՆ ՄՈՒԿՈՒՉՅԱՆԻ ԿԱԴՐԵՐԸ » ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Հոդվածի հեղինակը, անդրադառնալով մայիսի 10-ին թիվ 17 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կողմից մեծամասնական ընտրակարգով պատգամավորի թեկնածու Գագիկ Ներսիսյանի վստահված անձանց ներկայացրած դիմումի քննարկմանը, մասնավորապես գրում է. <<Հովիկ Աբրահամյանի հովանավորյալ և ԿԸՀ նախագահ Տիգրան Մուկուչյանի հավանությանն արժանացած ընտրատարածքային հանձնաժողովի նախագահ Արմեն Մարգարյանի համար բողոքների քննարկումը ընդամենը զվարճանքի պես մի բան էր:... Ընտրատարածքային հանձնաժողովի նախագահը նշանակվում է ԿԸՀ նախագահի կողմից, տվյալ դեպքում Տիգրան Մուկուչյանի>>:

ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը տեղեկացնում է, որ համաձայն ՀՀ ընտրական օրենսգրքի 41-րդ հոդվածի 1-ին մասի՝ <<...Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամներին նշանակում է կենտրոնական ընտրական հանձնաժողովը մինչև ընտրատարածքային ընտրական

հանձնաժողովի լիազորությունների ավարտը>>, իսկ նույն հոդվածի 12-րդ կետը սահմանում է. <<Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների նախագահներին, հանձնաժողովների նախագահների տեղակալներին և հանձնաժողովների քարտուղարներին ընտրում են համապատասխան հանձնաժողովներն իրենց կազմերից՝ կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի, նախագահի տեղակալի և քարտուղարի ընտրության համար սահմանված կարգով>>:

ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի **2011թ. օգոստոսի 15-ի** N 64-Ա որոշմամբ՝ **Արմեն Էմիկի Մարգարյանը** նշանակվել է թիվ 17 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամ, և վերջինս հանձնաժողովի նախագահ է ընտրվել համապատասխան հանձնաժողովի կողմից:

Վերոգրյալից ակնհայտ է, որ թիվ 17 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահ Արմեն Մարգարյանը չէր կարող <<նշանակված>> լինել Տիգրան Մուկուչյանի կողմից, քանի որ 2011թ. օգոստոսին Տիգրան Մուկուչյանը զբաղեցրել է ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի նախագահի պաշտոնը:

<u>ԿԸՀ մամլո ծառայություն</u>

Հեռ. (+374 10) 563271, ֆաքս (+374 10) 543523, web: www.elections.am, e-mail:press@elections.am